ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՀԱՅ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՀԱՅ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՎ ԿԼԱՍԻՑԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Օսիպյան Արմեն
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի լաբորանտ

Գեղագիտությունը՝ իբրև համապարփակ և ընդհանրացված գիտություն գեղեցիկի և նրա բազմազան դրսևորումների մասին, անվիճելիորեն հիմնվում է մի շարք կատեգորիաների վրա, որոնք ապահովում են վերջինիս բնականոն գոյությունն ու ինքնուրույն կարգավիճակը: Ու թեպետև «էսթետիկա» կամ «գեղագիտություն» հասկացությունը առաջադրվել է միայն XVIII դարում՝ գերմանացի հարաճանաչ տեսաբան Ալեքսանդր Բաումգարտենի կողմից, այնուամենայնիվ, իր գիտական բովանդակությունն ու զարգացումը վերոհիշյալ ֆենոմենը ստացել է Հին Հունաստանում: Ինչպես նշում է XX դարի ճանաչված հայ գեղագետ Վ.Ա.Հովսեփյանը (Օսիպյանը), «…Հելլադան եղել է այն երկիրը, որտեղ գեղեցիկը և արվեստը ուսումնասիրող գիտությունը բարձրացվել է տեսական մակարդակի»[1]:

Անառարկելի է գեղեցիկի, ինչպես նաև այլ գեղագիտական երևույթների, ինչպիսիք են՝ վեհը, ողբերգականը և կատակերգականը, գեղագիտական ճաշակն ու իդեալը գեղարվեստական պատկերը առանցքային դերն ու նշանակությունը ողջ էսթետիկայի, կամ գեղագիտության համար: Բոլոր վերը նշված երևույթները աչքի են ընկնում իրենց կատեգորիալ բնույթով: Ընդհանրապես, ինչպես նշված է Գեղագիտական հակիրճ բառարանում՝ գեղագիտական կատեգորիաները՝ «առավելագույնս ընդհանուր տրամաբանական հասկացություններ են, որոնք բացահայտում են գեղագիտության՝ իբրև գիտության

[1] **Վ. Ա. Հովսեփյան,** Գեղագիտական ուսմունքների պատմություն, ԵՊՀ, Եր, 1979, էջ 5:

բովանդակությունը և գիտականորեն ընդհանրացնում շրջապատող իրականության գեղագիտական յուրահատկությունը»[2]:

Հայ գեղագիտական միտքը իր ողջ պատմության ընթացքում (Վաղ Միջնադարից մինչև արդի ժամանակաշրջանը), ի դեմս բազմաթիվ փիլիսոփաների, գեղագետների, տեսաբանների և մտածողների ծնել է բավականին մեծ քանակի և բազմապիսի արժեքավոր մտքեր և տեսություններ, որոնք անմիջականորեն առնչվում են մեր խնդրո առարկային: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ հայ նշանավոր գիտնականների և գործիչների կողմից գեղագիտական կատեգորիաներին տրված գնահատականները մենք մտադիր ենք ներկայացնել ժամանակագրական եղանակով, քանի որ քանակական առումով վերջիններս բավականին անհավասար են բաշխված վերոհիշյալ մտածողների աշխատություններում: Այլ կերպ ասած՝ մեր հայրենակիցների ստեղծագործություններում և առանձին վերցրած արտահայտություններում քանակական առումով հիմնական ուշադրությունը դարձվում է գեղեցիկի՝ իբրև գեղագիտության հիմնական կատեգորիայի, իսկ այնուհետև էսթետիկական այլ կատեգորիալ ֆենոմենների՝ վեհի, ողբերգականի, կատակերգականի, գեղագիտական ճաշակի, իդեալի և գեղարվեստական պատկերին:

Հայտնի է, որ մեկ հակիրճ հոդվածի շրջանակներում անհնար է լուսաբանել և ընդհանրացնել հայ գեղագիտական մտքի ողջ կատեգորիալ սպեկտրը, ուստի մենք մեր առջև խնդիր ենք դնում առաջին հերթին անդրադառնալ մեր խնդրո առարկային վերաբերող միջնադարյան և կլասիցիզմի ժամանակաշրջանների գեղագիտական նյութին՝ հետագայում վերոհիշյալ թեմայի զարգացման մտադրությամբ, առաջիկա մեր աշխատություններում: Եվ, այսպես, հայ փիլիսոփայության Վաղ Միջնադարի վառ ներկայացուցիչները՝ Եզնիկ Կողբացին (մահացել է մոտ 450թ.) իր «Եղծ աղանդոց»-ով և Հովհան Մանդակունին,(V դ.) իր «Ճառերով», ի տարբերություն այդ ժամանակվա Եվրոպայի փիլիսոփա-աստվածաբանների՝ Օգոսթինոս Երանելիի (IV-Vդ) Բուեցիուսի (V-VIդդ.), որոնք գեղեցիկը կապում են միմիայն Աստծո հետ, թեև իբրև գեղեցիկի սկզբնաղբյուր անվերապահորեն դիտում են Աստծուն, կամ աստվածայինը, սակայն միևնույն ժամանակ ամենևին չեն նսեմացնում և արժեզրկում երկրային գեղեցկության նշանակու-

[2] Краткий словарь по эстетике, изд. Политической литературы, М, 1963, с. 146:

թյունը: Ինչպես վկայում է ճանաչված հայ գեղագետ Ա. Ադամյանը՝ խոսելով նրանցից առաջինի մասին. «աստվածաբան Եզնիկը կանգնած է երկու ոտքով մեղսավոր երկրի վրա»[3]:

Ե՛վ Կողբացին, և՛ Մանդակունին դիտարկում են գեղեցիկը բարոյականի հետ անքակտելի կապի շրջանակներում, բխեցնելով այդ երկու կատեգորիաները աշխարհաստեղծ միակ ուժից, կամ Աստծուց: Միևնույն ժամանակ նրանք չեն ժխտում, այլ, ընդհակառակը, ընդգծում են գեղեցիկ իրերի, երևույթների և, վերջապես, մարդկանց ինքնուրույն գեղագիտական արժեքն ու նշանակությունը:

Համաձայն մեր պանծալի հայրենակիցների, աստվածային ծագում ունեցող գեղեցիկը արժանի է պաշտամունքի և ունի մեծագույն խորհուրդ իր բազմազան հոգևոր և երկրային դրսևորումներում:

Վաղ Միջնադարի ճանաչված տեսաբաններից է նաև Դավիթ Քերականը (VI դ.): Նա, թերևս, վերոհիշյալ ժամանակաշրջանի առաջին ներկայացուցիչն է, ով խոսում է ողբերգականի կատեգորիայի մասին: Ըստ նրա՝ ողբերգություն է համարվում պոետական արվեստի այնպիսի մի բնագավառ, որի մեջ լիակատար ամբողջականությամբ արտացոլվում են և սարսափելի, և գեղեցիկ գործողությունները: Այսպիսով՝ Քերականը բացահայտորեն ընդգծում է ողբերգականի ինքնուրույն, կատեգորիալ կարգավիճակը և վերջինիս պայմանավորված լինելը այլ, հիմնական կատեգորիայից, այսինքն՝ գեղեցիկից:

Դավիթ Քերականի հետնորդներից՝ Ստեփանոս Սյունեցին (VIIIդ.) խոսում է ոչ միայն ողբերգության, այլ նաև հերոսականի և կատակերգականի մասին: Վերջինիս համար ողբերգությունն այն արվեստն է, որը կոչված է մխիթարելու տառապյալներին: Ըստ Սյունեցու, ողբերգականն անմիջականորեն կապված է մի այլ՝ հերոսականի կատեգորիայի հետ, որն իր հերթին ենթադրում է խիզախության, անձնուրաճության և հայրենասիրության ցուցադրում:

Ինչ վերաբերում է կատակերգությանը, ապա վերոհիշյալ մտածողը այն համարում է արվեստի մի տեսակ, որը բացահայտում և խարազանում է մարդկանց բացասական կողմերը՝ վախկոտությունը, ագահությունը, ծուլությունը, և որը ստիպում է վերջիններիս վերաիմաստավորելու սեփական կյանքը:

---

[3] **А. Адамян.** Естетические воззрения средневековой Армении Е. изд. «Луйс», с. 156.

Վաղ Միջնադարի հայ աստվածաբանների շարքում աչքի է ընկնում նաև մի այլ խոշոր դեմք՝ Հովհաննես Օձնեցին (VIII դ): Ըստ նրա՝ ամենագեղեցիկն աշխարհում այն է, ինչ ընկալվում է մարդու գիտակցության կողմից որպես մասնակիի և ամբողջի անբաժան միասնություն: Այս կապակցությամբ Օձնեցին որպես օրինակ հիշատակում է քրիստոնեական տաճարը, որը մեզ բոլորիս ստիպում է մտածել Աստծո մեծության, հզորության և գեղեցկության մասին: Միևնույն ժամանակ Օձնեցին զգուշացնում է, որ նույնիսկ ամենասքանչելի տաճարի գեղեցկությունը չի համեմատվի Աստծո գեղեցկության հետ, քանզի «վերջինս տարածված է ամբողջ աշխարհում, ամբողջ տիեզերքում»[4]:

Այսպիսով, Օձնեցին, նշելով վերոհիշյալ գեղագիտական ֆենոմենի համատարած և գերիշխող բնույթը, չտալով համապատասխան գիտական սահմանում, այնուամենայնիվ, ընդգծում է վերջինիս համընդհանուր, կատեգորիալ բնույթը:

Վաղ Միջնադարի գեղագիտությանը փոխարինելու է գալիս Հայոց Վերածննդի (X-XIII դդ) գեղագիտությունը: Այստեղ, ի տարբերություն եվրոպական Վերածնության դարաշրջանի տեսաբանների, որոնք առավելապես աչքի էին ընկնում գեղեցիկի նկատմամբ հայեցողական մոտեցումով, հայ մտածողները վերոհիշյալ երևույթին փորձում էին տալ խորը և հիմնավոր վերլուծություն:

Այսպես, Հովհաննես Սարկավագի (XI-XIIդդ.) համար գեղեցիկի ծագման պատճառն են հանդիսանում բնության մեջ գործող հակասական ուժերը, որոնց անհրաժեշտությունն, ըստ մեծանուն փիլիսոփայի, անվիճելի է աշխարհի զարգացման տեսանկյունից: Սարկավագը համարում է, որ իսկական գեղեցկությունը մարմնավորված է բնության մեջ, իսկ վերջինիս կատարելությունը՝ կարևոր նախապայման է ամեն մի կոնկրետ գեղեցիկ առարկայի կամ երևույթի համար: Արվեստի գեղեցկությունն էլ, որին հատուկ ուշադրություն է դարձնում մեր պանծալի հայրենակիցը, նույնպես անմիջականորեն կապված է բնության կատարելության հետ: Դրա հետ մեկտեղ Սարկավագը այս կապակցությամբ առավելագույնս կարևորում է ճշմարտականությունը, կեղծիքի իսպառ բացակայությունը: Այդ ամենը հայ անվանի մտածողը շա-

---

[4] **Վ. Ա. Հովսեփյան,** Գեղագիտական ուսմունքների պատմություն, ԵՊՀ, Եր., 1979,էջ 173:

ռադրել է իր փիլիսոփայական չափածոյի մեջ՝ «Խոսք իմաստության» ստեղծագործությունում:

Հովհաննես Երզնկացին (XIII դ.), իր նախորդի նման, ճշմարիտ գեղեցկությունը տեսնում է բնության մեջ և, զարգացնելով վերջինիս գաղափարը, իրականության մեջ գոյություն ունեցող գեղեցիկը անհամեմատ ավելի բարձր է դասում արվեստի գեղեցկությունից: Ի դեպ, նա առաջիններից է, ով կլասիցիզմի դարաշրջանից դարեր առաջ շոշափում է իրականության և արվեստի գեղագիտական հարաբերությունների թեման: Հայոց Վերածննդի դարաշրջանում իր ուրույն տեղն է զբաղեցնում մեծանուն բանաստեղծ, երգահան և փիլիսոփա Ներսես Շնորհալին (XIIդ.): Իր հռչակավոր ստեղծագործություններից մեկում, որը գրված է եղել չափածո, նա տարածում է գեղեցիկը ողջ տիեզերքի վրա, գտնելով, որ բարձրագույն գեղեցկությունը աշխարհի շարժման, երևույթների փոխադարձ կապի և նրանց ներդաշնակության մեջ է: Ըստ Շնորհալու, մարդիկ, հաղորդակից լինելով այդ գեղեցկությանը, դառնում են ավելի կատարյալ և հոգեպես մաքուր: Այլ կերպ ասած՝ մեծանուն գործիչը ուշադրություն է դարձնում այնպիսի գեղագիտական երևույթի, ինչպիսին է կատարսիսը կամ մաքրագործումը, որը հիշատակվելով առաջին անգամ Արիստոտելի կողմից, հետագայում գիտնականների որոշմամբ արդարացիորեն համարվել է ինքնուրյուն գեղագիտական կատեգորիա: Ի դեպ՝ գեղեցիկի և արվեստի մաքրագործող բովանդակության մասին խոսում է նաև Հայոց Վերածննդի մեկ ուրիշ գործիչ՝ Ներսես Լամբրոնացին (XIIդ.), ընդգծելով դրանց նշանակությունը մարդու բարոյական դաստիարակության համար: Հարկ է նշել նաև Շնորհալու այն միտքը, որ գեղեցիկի շնորհիվ մարդը ստեղծում է մի նոր գեղագիտական իրողության, ավելի կատարյալ և բնության մեջ գոյություն չունեցող[5]:

Հայ փիլիսոփայական մտքի ուշ Միջնադարի ցայտուն ներկայացուցիչներից է Գրիգոր Տաթևացին (XIV-XVդդ.), որի համար գեղեցիկը հանդես է գալիս երկու եղանակով՝ աստվածային և երկրային: Առաջինը, ըստ նրա, ինքնին կատարելություն է, իսկ երկրորդը հիմնվում է հատկանիշների միասնության և հանրագումարի վրա: Ավելի ուշ ժամանակաշրջանի մտածող Ստեփանոս Լեհացին (XVIIդ.) գեղե-

[5] Տե՛ս **Ներսես Շնորհալի,** Բանքչափաւ.Յաղագս երկնից և զարդուց նորա, «Հայաստան» հրատ., Եր., 1968, էջ 24:

ցիկը դիտարկում է զգայարանների և տրամաբանության զուգորդման տեսանկյունից: Նրա պատկերացմամբ՝ մարդը գեղեցկությունն ընկալում է տեսողությամբ և լսողությամբ, իսկ տրամաբանությամբ արժևորում է վերջինիս իմաստը: Լեհացին խոսում է նաև գեղագիտականի և բարոյականի կապի մասին՝ ընդգծելով գեղեցիկի և բարու անքակտելի միասնությունը:

Հայ կլասիցիզմի ռահվիրան՝ Խաչատուր Էրզրումեցին (XVIIդ.), թերևս, առաջինն է հայ տեսաբանների շարքում, ով խոսում է վեհի կատեգորիայի մասին: Ըստ նրա, վեհ են մարդկանց արարքներն ու գեղարվեստական ստեղծագործությունները, որոնք լի են ազնվազարմ սխրանքներով: Էրզրումեցին վեհը դիտում է գեղեցիկի հետ անբաժանելի միասնության շրջանակներում:

Վերջինիս ժամանակակիցը՝ Մխիթար Սեբաստացին (XVIIIդ.) լուրջ գնահատական է տալիս գեղեցիկին որպես մասերի և ամբողջի ներդաշնակությանը: Մյուս կողմից, վերոհիշյալ երևույթը չի կարող գոյատևել առանց բովանդակային խորության, որի բացակայության դեպքում, ըստ Սեբաստացու, գեղեցիկը դատապարտված է մահվան:

Բացի վերը նշված երկու գործիչներից՝ հայ գեղագիտության մեջ կլասիցիստական ուղղության մեկ այլ ներկայացուցիչ է հանդիսանում Ստեփանոս Ագոնդը (XVIIդ): Որպես կլասիցիստական պոետիկայի ջատագով, վերջինս իր «Ճարտասանություն» երկում նշում է, որ գեղեցիկի համար առաջնային կարևորություն ունի ***պարզորոշությունն*** ու իրերի ***բանական պատճառաբանվածությունը***:

Արժեքավոր է նաև Ագոնցի միտքն այն մասին, որ, ի տարբերություն ճշգրիտ գիտությունների, արվեստն ու գեղեցիկը պատկերացում են տալիս աշխարհի երևույթների մասին ոչ թե ուղիղ, այլ ***միջնորդավորված*** եղանակով, ինչը ապահովվում է գեղարվեստական պատկերի շնորհիվ: Այսպիսով, շրջապատող իրականության գեղագիտական ընկալման ասպարեզում վերոհիշյալ մտածողը կարևորում է երկու գեղագիտական կատեգորիաների՝ գեղեցիկի և գեղարվեստական պատկերի անբաժանելի կապը և փոխադարձաբար պայմանավորված լինելը:

Այսպիսով, մեր տեսաբանական հետազոտությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք բավականին հարուստ գեղագիտական նյութի հետ: Եվ իրոք, միայն Միջնադարի և Կլասիցիզմի ժամանակների բազմաթիվ փիլիսոփաների և մտածողների աշխատությունները վկա-

յում են այն մասին, որ վերոհիշյալ ժամանակաշրջանի հայ գեղագիտական միտքը գտնվում է բարձր մակարդակի վրա, իսկ մեր հայրենակիցների ստեղծագործությունները լի են խորը վերլուծություններով և հետաքրքրությունների բավականին լայն սպեկտրով: Գեղեցիկի՝ իբրև գեղագիտական հիմնական կատեգորիայի մասին երբեմն սկզբունքորեն տարբեր, երբեմն էլ միմյանց փոխլրացնող գնահատականները, նրա հստակ և երևելի կապի բացահայտումը այլ գեղագիտական կատեգորիաների՝ վեհի, ողբերգականի կատակերգականի, հերոսականի, գեղարվեստական պատկերի հետ անսխալ տպավորություն են ստեղծում V-XVIIդդ. հայ գեղագիտական մտքի լիարժեք կայացած լինելու մասին:

Այնպես որ, վստահորեն կարելի է պնդել, որ մեր կողմից լուսաբանված ժամանակահատվածը գիտական լուրջ ազդեցություն է ունեցել ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային գեղագիտական մտքի հետագա զարգացման վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գեղագիտական կատեգորիաները՝ ի դեմս գեղեցիկի, վեհի, ողբերգականի, կատակերգականի, հերոսականի, ինչպես նաև կատարսիսի (հոգևոր մաքրագործման) և գեղարվեստական պատկերի հիմնավոր տեղ են զբաղեցնում հայ Միջնադարի և կլասիցիզմի ժամանակաշրջանների փիլիսոփաների և մտածողների աշխատություններում: Ամենևին չսահմանափակվելով հայեցողական գնահատականներով, հայ փիլիսոփաները վերոհիշյալ էսթետիկական լայն երևույթներին տալիս են խորը և արժեքավոր վերլուծություններ: Այսպիսով՝ գեղեցիկը դիտարկվում է որպես աստվածայինի գերագույն դրսևորում, որը տարածվում է մարդկանց և առարկաների վրա (Կողբացի, Մանդականի, Օձնեցի), կատարելություն, ամբողջի և մասերի ներդաշնակություն, զգայարանների և տրամաբանության զուգորդում (Տաթևացի, Լեհացի), բարձր բովանդակությամբ լեցուն երևույթ (Մխիթար Սեբաստացի): Գեղեցիկի բարձրագույն դրսևորումն է վեհը (Էրզրումեցի), իսկ ողբերգականը, կատակերգականը, հերոսականը և կատարսիսը հիմնված են կյանքի հակասությունների և ապրումակցության վրա (Դավիթ, Քերական, Սյունեցի, Շնորհալի):

Բանալի բառեր. գեղագիտություն, կատեգորիա, գեղեցիկը, Միջնադար, կլասիցիզմ, կատարելություն, ֆենոմեն:

РАССМОТРЕНИЕ КАТЕГОРИЙ ЭСТЕТИКИ В СВЕТЕАРМЯНСКОЙ ЭСТЕТИЧЕСКОЙ МЫСЛИ СРЕДНЕВЕКОВЬЯ И ПЕРИОДА КЛАССИЦИЗМА.

Осипян Армен
Лаборант Институт философии,
социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Эстетические категории как в лице прекрасного возвышенного, трагического, комического, героического, так и катарсиса (духовного очищения) и художественного образа занимают основательное место в трудах армянских философов и мыслителей Средневековья и классицизма. Отнюдь не ограничиваясь созерцательными оценками, армянские исследователи даютглубокой и ценный анализ вышеупомянутых широких эстетических явлений. Так, прекрасное рассматривается как высшее проявление божественного, которое распространяется на людей и предметы (Кохбаци, Мандакуни, Одзнеци), как совершенство, единство частей и целого, как гармония, сочетание чувственного и логического (Григор Татеваци, Степанос Лехаци), как явление, наполненное высоким содержанием (Мхитар Себастаци). Наивысшее проявление прекрасного есть возвышенное (Хачатур, Эрзрумеци), а трагическое, комическое, героическое и катарсис основаны на жизненных противоречиях и сопереживании (Давид Керакан, Сюнеци, Шнорали).

Ключевые слова: эстетика, категория, прекрасное, Средневековье, классицизм, совершенство, феномен.

THE CONSIDERATION OF THE CATEGORIES OF AESTHETICS IN THE ILLUSTRATION OF ARMENIAN AESTHETIC THOUGHT OF MIDDLE AGES AND CLASSICISM.

Osipyan Armen
Laborant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

The aesthetic categories such as beautiful, majestic tragic, comic, heroic, and catharsis (spiritual purify), artistic image take own solid place in the works of the Armenian philosophers and thinkers in period of Middle Ages and classicism. By no means not to be limited by contemplation valuations, Armenian researchers give us the deep and valuations analysis of these aesthetic phenomena. So the beautiful is considered as high manifestation of heavenliness, which is broadcasted on the persons and subjects (Koghbatsi, Mandakuni, Odznetsi), as perfection, as unity of the parts and wholeness, as a harmony, as a combination of the sensual and logic (Tatevatsi, Lehatsi), as a phenomenon, full of high content (Sebastatsi). The most superior manifestation of the beautiful is majestic (Erzrumetsi), and tragic, comic heroic and catharsis are founded on vital contradictions and co-experience (Kerakan, Siunetsi, Shnorhali).

Key words: aesthetics, category, beautiful, Middle Ages, classicism, perfection, phenomenon.